Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. ապրիլի 30-ի թիվ 114-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ **6**

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ **6**

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ **6**

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ **7**

IV. ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ **10**

V. 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԼՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ **16**

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 16
2. ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ 17
3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 18
4. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 20
5. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 20
6. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 21
7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ 21
8. ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ 22
9. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ 22
10. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ 5-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ 22
11. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ 10-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ 23
12. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ 18-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ 23
13. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ 21-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ 24

14. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ 23-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ 24
15. ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ.....25
VI. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 26
VII. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 26
VIII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 26

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի փետրվարի 10-ի թիվ 30/Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ պետական եկամուտների կոմիտե:
Հաշվեքննության առարկան	ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2019 թվականի դեպտեմբերի 26-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919 որոշում, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշում, «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ» և այլ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի փետրվարի 16-ից մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, «Պետական բյուջեի երեք, վեց,

ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ութերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Արմեն Գևորգյանը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՊԵԿ ՀՀ պետական եկամուտների կոմիտե

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեում հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի 2021 թվականի փետրվարի 10-ի թիվ 30-Ա որոշման հիմքով:

Հաշվեքննության առաջադրանքով նախատեսվել է իրականացնել Կոմիտեի 2020 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննությունն իրականացվել է 2021 թվականի փետրվարի 16-ից մինչև 2021 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 8-րդ վարչության կողմից:

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվեքննության իրականացման համար ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեին վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից ՊԵԿ կողմից կատարվող ծախսերի տարեկան պլանը սահմանվել է 98,713,646.4 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը՝ 133,700,947.25 հազ. դրամ: Ֆինանսավորումը՝ 132,169,016.12 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 132,068,934.05 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 131,038,666.01 հազ.դրամ:

ՀՀ ՊԵԿ 2020 թվականի բյուջեի ծախսերի կատարողականը ըստ միջոցառումների հետևյալն է.

(հազ.դրամ)

Ծրագիր	Միջոցառում հոդված	Տարեկան ճշտված պլան	Ֆինանսա-վորում	Փաստ	Փաստացի ծախս	Կատարո-ղական (%)	Պլանի մնացորդ
	ԸՆԴԱՄԵՆԸ	**133,700,947.25**	**132,169,016.12**	**132,068,934.05**	**131,038,666.01**	**98.78**	**1,632,013.20**
10090201	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	**237,168.00**	**172,042.00**	**170,532.15**	**170,532.15**	**71.90**	**66,635.85**
01010201	Հարկային և մաքսային ծառայություններ	**19,655,213.40**	**19,509,617.26**	**19,507,362.03**	**19,101,040.31**	**99.25**	**147,851.37**
	Աշխատանքի վարձատրություն	*15,248,654.60*	*15,248,654.60*	*15,248,010.83*	*15,241,698.70*	*100.00*	*643.77*
	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	*8,652,258.50*	*8,652,258.50*	*8,651,614.73*	*8,645,302.60*	*99.99*	*643.77*
	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	*2,902,939.40*	*2,902,939.40*	*2,902,939.40*	*2,902,939.40*	*100.00*	*-*
	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	*743,898.50*	*743,898.50*	*743,898.50*	*743,898.50*	*100.00*	*-*
	- Հարկային և մաքսային մարմինների աշխատողների պարգևատրում	*2,949,558.20*	*2,949,558.20*	*2,949,558.20*	*2,949,558.20*	*100.00*	*-*
	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	*3,899,362.50*	*3,763,947.89*	*3,763,346.43*	*3,368,370.63*	*96.51*	*136,016.07*
	- Էներգետիկ ծառայություններ	*391,426.20*	*388,606.70*	*388,606.70*	*388,226.63*	*99.28*	*2,819.50*
	- Կոմունալ ծառայություններ	*24,082.00*	*23,407.59*	*23,407.59*	*23,407.59*	*97.20*	*674.41*
	- Կապի ծառայություններ	*89,021.40*	*83,045.91*	*83,045.91*	*76,058.25*	*93.29*	*5,975.49*
	- Ապահովագրական ծախսեր	*5,423.00*	*5,423.00*	*5,423.00*	*5,423.00*	*100.00*	*-*
	- Գույքի և սարքավորումների վարձակալություն	*206,538.90*	*195,433.87*	*195,433.87*	*195,433.87*	*94.62*	*11,105.03*
	- Արտագերատեսչական ծախսեր	*23,600.00*	*23,600.00*	*23,600.00*	*23,600.00*	*100.00*	*-*
	- Ներքին գործուղումներ	*146,641.44*	*146,641.44*	*146,039.98*	*146,039.98*	*99.59*	*601.46*
	- Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	*11,529.26*	*11,529.26*	*11,529.26*	*11,529.26*	*100.00*	*-*
	- վարչական ծառայություններ	*152,750.14*	*152,129.44*	*152,129.44*	*152,129.44*	*99.59*	*620.70*

	- Համակարգչային ծառայություններ	*792,496.50*	*792,364.24*	*792,364.24*	*792,364.24*	*99.98*	*132.26*
	- Տեղեկատվական ծառայություններ	*32,603.70*	*28,805.49*	*28,805.49*	*25,968.31*	*88.35*	*3,798.21*
	- Կառավարչական ծառայություններ	*19,436.50*	*18,286.44*	*18,286.44*	*18,286.44*	*94.08*	*1,150.06*
	- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	*500.00*	*428.98*	*428.98*	*428.98*	*85.80*	*71.02*
	- Ներկայացուցչական ծախսեր	*675.00*	*675.00*	*675.00*	*675.00*	*100.00*	*-*
	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	*1,258,209.40*	*1,217,376.02*	*1,217,376.02*	*1,170,259.87*	*96.75*	*40,833.38*
	Մասնագիտական ծառայություններ	*21,695.00*	*12,180.00*	*12,180.00*	*12,180.00*	*56.14*	*9,515.00*
	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	*47,677.60*	*30,539.13*	*30,539.13*	*30,539.13*	*64.05*	*17,138.47*
	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	*28,040.00*	*24,476.26*	*24,476.26*	*24,476.26*	*87.29*	*3,563.74*
	- Գրասենյակային նյութեր և հագուստ	*288,372.46*	*256,942.72*	*256,942.72*	*69,666.17*	*89.10*	*31,429.74*
	- Տրանսպորտային նյութեր	*154,978.18*	*154,976.07*	*154,976.07*	*95,780.42*	*100.00*	*2.11*
	- Առողջապահական և լաբորատոր նյութեր	*3,000.00*	*1,677.37*	*1,677.37*	*1,677.37*	*55.91*	*1,322.63*
	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	*103,931.32*	*98,723.12*	*98,723.12*	*77,658.35*	*94.99*	*5,208.20*
	- Հատուկ նպատակային այլ նյութեր	*96,734.50*	*96,679.84*	*96,679.84*	*26,562.07*	*99.94*	*54.66*
	Այլ ծախսեր	*507,196.30*	*497,014.77*	*496,004.77*	*490,970.98*	*97.79*	*11,191.53*
01010203	Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերում	**1,872,720.00**	**1,872,720.00**	**1,872,720.00**	**1,495,460.26**	**100.00**	**-**
09050211	Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստում	**135,411.10**	**135,411.10**	**135,411.10**	**135,411.10**	**100.00**	**-**
01010207	Դրոշմապիտակների ձեռքբերում	**4,762,800.00**	**4,762,800.00**	**4,762,800.00**	**3,921,058.39**	**100.00**	**-**
01060104	Փորձաքննությունների ծառայություններ	**10,847.30**	**10,776.38**	**10,776.38**	**10,776.38**	**99.35**	**70.92**
04090120	ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	**185,261.40**	**185,261.32**	**185,261.32**	**185,261.32**	**100.00**	**0.08**
01010206	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում	**1,129,914.00**	**904,196.56**	**904,196.56**	**904,196.56**	**80.02**	**225,717.44**
	- Վարչական սարքավորումներ	*309,992.00*	*178,433.56*	*178,433.56*	*178,433.56*	*57.56*	*131,558.44*
	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	*811,962.00*	*725,763.00*	*725,763.00*	*725,763.00*	*89.38*	*86,199.00*
	- Աճեցվող ակտիվներ	*5,960.00*	*-*	*-*	*-*	*-*	*5,960.00*
	- Ոչ նյութական հիմնական միջոցներ	*2,000.00*	*-*	*-*	*-*	*-*	*2,000.00*
01010211	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային	**1,478,281.60**	**1,443,736.96**	**1,443,736.96**	**2,033,480.52**	**97.66**	**34,544.64**

	ապահովվածության բարելավում						
	- Շենքերի և շինությունների շինարարություն	*1,417,739.10*	*1,395,486.96*	*1,395,486.96*	*1,985,230.52*	*98.43*	*22,252.14*
	- Նախագծահետազոտական ծախսեր	*60,542.50*	*48,250.00*	*48,250.00*	*48,250.00*	*79.70*	*12,292.50*
01010212	ՀՀ ՊԵԿ շենքային պայմանների բարելավում	**13,995.00**	**12,025.00**	**12,025.00**	**12,025.00**	**85.92**	**1,970.00**
	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	*11,495.00*	*9,525.00*	*9,525.00*	*9,525.00*	*82.86*	*1,970.00*
	- Նախագծահետազոտական ծախսեր	*2,500.00*	*2,500.00*	*2,500.00*	*2,500.00*	*100.00*	*-*
01010220	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմաններով ապահովում	**17,325.50**	**-**	**-**	**-**	**-**	**17,325.50**
	- Շենքերի և շինությունների ձեռք բերում	*2,233.00*	*-*	*-*	*-*	*-*	*2,233.00*
	- Հող	*15,092.50*	*-*	*-*	*-*	*-*	*15,092.50*
10020110	Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին	**84,825,856.20**	**84,651,484.22**	**84,642,937.15**	**84,642,937.15**	**99.78**	**182,919.05**
10090226	Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում	**8,832,153.75**	**8,832,153.75**	**8,832,153.75**	**8,832,153.75**	**100.00**	**-**
04010121	Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 5-րդ միջոցառման շրջանակներում աջակցության տրամադրում	**2,200,000.00**	**2,199,791.57**	**2,165,533.60**	**2,165,533.60**	**98.43**	**34,466.40**
04010122	Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 18-րդ միջոցառման շրջանակներում աջակցության տրամադրում	**2,114,000.00**	**2,114,000.00**	**2,113,996.66**	**2,113,996.66**	**100.00**	**3.34**
04010124	Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման 21-րդ միջոցառման շրջանակներում իրականացվող աջակցության տրամադրում	**2,630,000.00**	**2,630,000.00**	**2,614,916.90**	**2,614,916.90**	**99.43**	**15,083.10**
04010126	Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 10-րդ միջոցառման շրջանակներում աջակցության տրամադրում	**300,000.00**	**300,000.00**	**294,684.23**	**294,684.23**	**98.23**	**5,315.77**
04010129	Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման 23-րդ միջոցառման շրջանակներում իրականացվող աջակցության տրամադրում	**3,300,000.00**	**2,433,000.00**	**2,399,890.26**	**2,399,890.26**	**72.72**	**900,109.74**
11010101	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	**-**	**-**	**-**	**5,311.47**	**-**	**-**

IV. ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

«ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի եկամուտները նախատեսվել են 1,695,009,852.1 հազ. դրամ:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի եկամուտների և 2018, 2019 թվականների ժամանակաշրջանների համադրելի ցուցանիշները հետևյալն են՝

Աղյուսակ 1

Եկամտատեսակը	2018թ.		2019թ.		2020թ.	
	մլրդ դրամ	%-ը	մլրդ դրամ	%-ը	մլրդ դրամ	%-ը
Ընդամենը, որից՝	**1,341.7**	**100.0%**	**1,565.5**	**100.0%**	**1,695.0**	**100.0%**
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,258.1	93.8%	1,464.3	93.5%	1,602.3	94.5%
2. Պաշտոնական դրամաշնորհներ	11.3	0.8%	12.4	0.8%	35.3	2.1%
3. Այլ եկամուտներ	72.3	5.4%	88.8	5.7%	57.4	3.4%

Համավարակի ազդեցության հետևանքով և այն մեղմելու անհրաժեշտությունից բխող հակաճգնաժամային միջոցառումներ իրականացնելու կարիքով և ռազմական դրության իրավական ռեժիմի կարգավորումներով պայմանավորված, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2 րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով, Կառավարությունն իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում կատարել է փոփոխություններ պետական բյուջեի եկամուտների ծրագրային ցուցանիշում, որի արդյունքում պետական բյուջեի եկամուտների տարեկան ճշտված ցուցանիշը կազմել է 1,563.1 մլրդ դրամ:

2020 թվականի տարեկան եկամուտների ծրագրային (ճշտված) ցուցանիշների և փաստացի կատարողականի տվյալները հետևյալն են.

Աղյուսակ 2
(մլրդ.դրամ)

	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ	Կատարողականը տարեկան ճշտված պլանի նկատմամբ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**1,695.0**	**1,563.1**	**1,560.7**	**99.8%**
այդ թվում՝	-	-	-	-
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	**1,602.3**	**1,380.8**	**1,385.2**	**100.3%**
Պաշտոնական դրամաշնորհներ	**35.3**	**61.9**	**53.2**	**85.9%**
Այլ եկամուտներ	**57.4**	**120.4**	**122.3**	**101.6%**

2020 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները (1,560,655,340.8 հազ.դրամ) կազմել են ճշտված ծրագրով կանխատեսված ցուցանիշի (1,563,075,416.8 հազ.դրամ) 99.8%-ը, որից հարկային եկամուտների և պետական տուրքերի փաստացի մուտքերը (1,385,205,429.1 հազ.դրամ) կազմել են ճշտված ծրագրային ցուցանիշի (1,380,842,319.8 հազ.դրամ) 100.3%-ը:

Պետական բյուջեի փաստացի եկամուտների 88.8%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի, 3.4%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների, 7.8%-ը՝ այլ եկամուտների հաշվին:

2019 թվականի համեմատ 2020 թվականի պետական բյուջեի եկամուտները նվազել են 0.3%-ով կամ 4.8 մլրդ դրամով:

ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների 2020 թվականի և նախորդ տարվա համեմատական ցուցնիշները հետևյալն են՝

Աղյուսակ 3
(մլն.դրամ)

h/h	Ցուցանիշ	2019թ.		2020թ.		
		Հունվար-դեկտեմբեր	տեսակ. կշիռը	Հունվար-դեկտեմբեր	տեսակ. կշիռը	Աճի տեմպը
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ պետական բյուջե հաշվեգրված հարկային եկամուտներ և պետական տուրք	1,464,300.1	100.0%	1,385,205.4	100.0%	94.6%
1.1	ԱԱՀ	474,377.1	32.4%	471,588.0	34.0%	99.4%
1.2	Շահութահարկ	181,265.6	12.4%	148,763.3	10.7%	82.1%
1.3	Եկամտային հարկ	410,348.2	28.0%	411,514.5	29.7%	100.2%
1.4	Ակցիզային հարկ	127,535.3	8.7%	123,555.7	8.9%	96.9%
1.5	Շրջանառության հարկ	28,998.2	2.0%	26,599.2	1.9%	91.7%
1.6	Արտոնագրային հարկ	4,085.9	0.3%	47.6	0.0%	1.2%
1.7	Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	58,261.5	4.0%	53,051.4	3.8%	91.1%
1.8	Մաքսատուրք	95,146.7	6.5%	68,267.3	4.9%	71.7%
1.9	Սոցիալական վճար	18,671.7	1.3%	24,758.1	1.8%	132.6%
1.10	Այլ հարկային եկամուտներ	21,206.3	1.4%	24,035.7	1.8%	114.8%
1.11	Պետական տուրք	45,859.6	3.1%	33,446.0	2.4%	72.9%
1.12	Հարկերի անցումային գերավճար	-1,456.0	-0.1%	-373.6	0.0%	

2020 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 1,385.2 մլրդ. դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, որոնք կազմել են ծրագրային ցուցանիշի

100.3%-ը: 2019 թվականի համեմատ հարկային եկամուտներն և պետական տուրքերն նվազել են 5.4%-ով կամ 79.1 մլրդ դրամով:

2020 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի կառուցվածքն ըստ եկամտի տեսակների հետևյալն է.

- 34.0%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին՝ կազմելով 471.6 մլրդ. դրամ, որից 283.8 մլրդ դրամը ստացվել է ՀՀ ներմուծվող ապրանքներից, այդ թվում՝ 107.3 մլրդ դրամը գանձվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ներմուծվող ապրանքների համար: Մնացած 187.8 մլրդ դրամը գանձվել է ՀՀ-ում արտադրվող ապրանքներից և ծառայություններից:

- 29.7%-ը ապահովվել է եկամտային հարկի հաշվին՝ կազմելով 411.5 մլրդ դրամ:

- 10.7%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 148.8 մլրդ դրամ:

- 8.9%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով 123.6 մլրդ դրամ:

  Մասնավորապես՝ հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 62.3 մլրդ դրամ, հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 61.2 մլրդ դրամ:

- 4.9%-ն ապահովվել է մաքսատուրքի հաշվին՝ կազմելով 68.3 մլրդ դրամ:

- 1.9%-ը ապահովվել է շրջանառության հարկի հաշվին՝ կազմելով 26.6 մլրդ դրամ:

- 1.8%-ը ապահովվել է սոցիալական վճարի հաշվին՝ կազմելով 24.8 մլրդ դրամ:

- 3.8%-ը ապահովվել է բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների հաշվին՝ կազմելով 53.1 մլրդ դրամ:

- 1.8%-ը ապահովվել է այլ հարկերի հաշվին՝ կազմելով 24.3 մլրդ դրամ:

- Հաշվետու ժամանակահատվածում հարկերի անցումային գերավճարից միասնական հաշիվ փոխանցված գումարը կազմել է 373.6 մլն դրամ:

- 2.4%-ը ապահովվել է պետական տուրքերի հաշվին՝ կազմելով 33.4 մլրդ դրամ:

Համաձայն ՊԵԿ կողմից հաստատված եզրակացությունների՝ 2020թ. և 2019թ. ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի

փոխհատուցվող գումարի, բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված (այդ թվում հարկային ուսումնասիրությունների արդյունքում) և ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով վերադարձված գումարների, ինչպես նաև վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գծով համադրելի ցուցանիշները հետևյալն են՝

Աղյուսակ 4
(մլն.դրամ)

h/h	Ցուցանիշ	2019թ.	2020թ.	
		Հունվար-դեկտեմբեր	Հունվար-դեկտեմբեր	Աճի տեմպ %
1	2	3	4	5
1	ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումար	83,900.1	74,595.6	88.9
2	Հաշվետու կիսամյակին և եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի գծով, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումար	78,387.7	45,261.2	57.7
3	ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումար	875.1	203.9	23.3
4	Վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գծով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված վճարման հանձնարարականների հանրագումար	7,907.8	13,345,0	168.8
5	**ԸՆԴԱՄԵՆԸ**	**171,070.7**	**133,405.7**	**78.0**

2020թ. ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումարները կազմել են 74,595.6 մլն դրամ, որը նախորդ տարվա ցուցանիշից պակաս է 11.1 տոկոսով, իսկ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումարը նախորդ տարվա համեմատ ավելի է 42.3 տոկոսով: ԱԱՀ-ի վերադարձի հաշիվներով ՀՀ տարածքում

վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումարը նախորդ տարվա համեմատ նվազել են 76.7 տոկոսով, ինչը հիմնականում պայմանավորված է COVID-19-ի հանգամանքով:

Վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարը նախորդ տարվա համեմատ աճել է 68.8 տոկոսով:

2020 թվականին ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների մասով ՀՀ պետական բյուջե վճարված հարկային եկամուտներն ու պետական տուրքերն ըստ եկամտային հաշիվների և ծախսային ուղղությունների հետևյալն է.

Աղյուսակ 5

Բյուջե մուտքերն ըստ եկամտային հաշիվների. (հազ.դրամ)

Ժամանակա-հատված	**Հարկերի միասնական հաշվից բյուջե մուտքեր**	**Այլ հաշիվներից բյուջե հարկային մուտքեր**	**Մաքսային ծառայության կողմից գանձված գումարներ**	**Ընդամենը բյուջե հաշվեգրված եկամուտներ**
2020թ	**1,169,623,750**	**59,797,706**	**296,586,314**	**1,526,007,771**
այդ թվում՝				
Հունվար	133,445,780	5,965,293	21,214,740	160,625,812
Փետրվար	67,231,843	4,352,398	21,001,219	92,585,460
Մարտ	102,800,953	5,331,999	22,879,590	131,012,542
Ապրիլ	140,523,351	4,339,032	17,688,570	162,550,953
Մայիս	70,019,017	3,436,667	16,784,319	90,240,003
Հունիս	82,146,003	3,211,495	23,819,610	109,177,108
Հուլիս	90,316,516	5,972,448	25,568,302	121,857,265
Օգոստոս	80,338,748	3,580,200	24,317,508	108,236,456
Սեպտեմբեր	109,917,072	4,640,237	25,704,528	140,261,837
Հոկտեմբեր	95,622,585	6,753,732	29,139,642	131,515,958
Նոյեմբեր	84,987,593	6,046,666	31,006,253	122,040,511
Դեկտեմբեր	112,274,290	6,167,542	37,462,033	155,903,865

*Հարկերի միասնական հաշվի մուտքերում հաշվի են առնվել վերահաշվարկները և ճշտումները

Աղյուսակ 5.1

(հազ.դրամ)

Բյուջեի եկամուտներից կատարված վերադարձները.

Ամիս	Անցումային գերավճարից վերադարձ հարկատու-ներին	Դեբետային գերավճարից վերադարձ հարկատուներին, այդ թվում՝ ՊԵԿ եզրակացությունների համաձայն վերադարձված	Վարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսներ	ԱԱՀ-ի վերադարձ (Tax free)	Այլ ելքեր	Ընդամենը հարկերից վերադարձ-ների գումարը
Հունվար	56,203	13,420,945	358,516	25,973	65,463	13,927,099
Փետրվար	27,404	5,155,686	2,009,365	15,212	73,812	7,281,479
Մարտ	51,140	13,429,330	416,063	45,022	39,254	13,980,809
Ապրիլ	31,643	10,172,212	593,086	39,883	41,634	10,878,457
Մայիս	11,721	5,403,687	1,824,020	23,650	34,200	7,297,278
Հունիս	15,535	11,815,858	642,884	16,648	46,514	12,537,438
Հուլիս	28,880	11,124,959	932,559	4,766	305,523	12,396,688
Օգոստոս	12,754	7,924,001	2,285,150	1,006	252,782	10,475,693
Սեպտեմբեր	72,414	10,240,393	260,223	2,698	435,327	11,011,054
Հոկտեմբեր	13,635	12,034,393	1,229,188	12,882	142,796	13,432,894
Նոյեմբեր	1,301,278	8,875,346	2,277,739	12,408	381,696	12,848,468
Դեկտեմբեր	43,973	11,000,538	506,674	3,765	3,186,374	14,741,323
Ընդամենը	**1,666,581**	**120,597,348**	**13,335,465**	**203,911**	**5,005,376**	**140,808,681**

2020 թվականի արդյունքներով պետական բյուջե զուտ մուտքերը՝

Աղյուսակ 5.2

(հազ.դրամ)

Ժամանակահատված	Հարկային եկամուտներ և պետական տուրքերի գումարը
2020 թվական	**1,385,199,090**
Հունվար	146,698,713
Փետրվար	85,303,981
Մարտ	117,031,733
Ապրիլ	151,672,496
Մայիս	82,942,724
Հունիս	96,639,670
Հուլիս	109,460,577
Օգոստոս	97,760,763
Սեպտեմբեր	129,250,783
Հոկտեմբեր	118,083,064
Նոյեմբեր	109,192,043
Դեկտեմբեր	141,162,542

V. 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԼՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարկային և մաքսային ծառայություններ ծրագրի շրջանակներում հարկային և մաքսային ծառայություններ միջոցառման մասով 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 20,012,049.3 հազ. դրամ գումար, իսկ տարեկան ճշտված ծրագրով՝ 19,655,213.4 հազ.դրամ:

Դրամարկղի ծախսը կազմել է 19,507,362.03 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 147,851.37 հազ. դրամ:

Մասնավորապես՝ սույն միջոցառման շրջանակներում ծախսերը ունեն հետևյալ կատարողականները.

Աղյուսակ 6
(հազ.դրամ)

Ծրագիր (հոդված)	**2020թ. ճշտված պլան**	**Ֆինանսավո-րում**	**Դրամարկղի ծախսը**	**Փաստացի ծախս**	**Կատարման %-ը 6=4/2 x100%**	**Պլանի մնացորդ 7=2-4**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**
Ընդամենը	**19,655,213.40**	**19,509,617.26**	**19,507,362.03**	**19,101,040.31**	**99.25**	**147,851.37**
Աշխատանքի վարձատրություն	15,248,654.60	15,248,654.60	15,248,010.83	15,241,698.70	100.0	643.77
Ապրանքների, ծառայությունների ձեռքբերում և այլ ծախսեր	3,899,362.50	3,763,947.89	3,763,346.43	3,368,370.63	96.51	136,016.07
Այլ ծախսեր	507,196.30	497,014.77	496,004.77	490,970.98	97.79	11,191.53

Աշխատանքի վարձատրության գծով փաստացի ծախսը կազմել է 19,101,040.31 հազ. դրամ, դրամարկղի ծախսը՝ 19,507,362.03 հազ. դրամ, աշխատանքի վարձատրության մասով տարվա վերջի դրությամբ կրեդիտորական պարտքը կազմել է 1,387.35 հազ. դրամ:

Աշխատանքի վարձատրության գծով ծախսի (դրամարկղի ծախսի) կատարողականը ճշտված ծրագրային ցուցանիշի նկատմամբ կազմել է 100%:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերումների և այլ ծախսերի գծով ծախսերի կատարողականը կազմել է 96.51%: 2020 թվականի ճշտված պլանի համեմատ տարբերությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ որոշ ապրանքներ և ծառայություններ ձեռք են բերվել ավելի մատչելի գներով, քան նախատեսված էր:

2. ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

Ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների ձեռքբերման միջոցառումների շրջանակներում կատարված ծախսերի ցուցանիշները հետևյալն են.

Աղյուսակ 7
(հազ.դրամ)

Ծրագիր (հոդված)	**2020թ. պլան**	**2020թ. ճշտված պլան**	**Ֆինանսավո-րում**	**Փաստ**	**Փաստացի ծախս**	**Կատարման %-ը 6=4/2 x100%**
1	**2**	**2**	**3**	**4**	**5**	**6**
Ընդամենը	**6,635,520.0**	**6,635,520.0**	**6,635,520.0**	**6,635,520.0**	**5,416,518.65**	**100.0**
Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերում	1,872,720.0	1,872,720.0	1,872,720.0	1,872,720.0	1,495,460.26	100.0
Դրոշմապիտակների ձեռքբերում	4,762,800.0	4,762,800.0	4,762,800.0	4,762,800.0	3,921,058.39	100.0

Տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 27 մլն հատ Ալկոհոլային խմիչքների ակցիզային դրոշմանիշերի, 450 մլն հատ Ծխախոտի արտադրանքի դրոշմանիշերի և 1,259 մլն հատ դրոշմապիտակների ձեռքբերում:

Նշված ծրագրերով ծախսերի (դրամարկղի ծախսի) կատարողականը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կազմել է 100 տոկոս: Փաստացի ծախսը ակցիզային դրոշմանիշերի մասով կազմել է 1,495,460.26 հազ. դրամ, իսկ դրոշմապիտակների մասով՝ 3,921,058.39 հազ. դրամ: Ձեռքբերումները կատարվել են տարեկան նախա-տեսված ամբողջ ծավալների չափով: 2020 թվականի տարեսկզբին պահեստավորված ազկցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների մնացորդները համապատասխանաբար կազմել են 614,895.06 հազ.դրամ և 2,368,222.76 հազ.դրամ, իսկ տարեվերջին՝ համապատասխանաբար 992,154.80 հազ.դրամ և 3,209,964.37 հազ.դրամ:

Այսպիսով, ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների մասով 2020 թվականի տարեվերջի պահեստային մնացորդը կազմում է ընդամենը 4,202,119.17 հազ.դրամ, ինչը կազմում է նույն թվականին կատարված ձեռքբերումների՝ 6,635,520.0 հազ.դրամի 63%-ը:

3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում միջոցառումով 2020թ. տարեկան պլանը կազմել է 1,764,914.00 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը՝ 1,129,914.00 հազ.դրամ իսկ ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը՝ 904,196.56 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 80.02%:

Տարեկան ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 225,717.44 հազ.դրամ:

Աղյուսակ 8

Արդյունքի չափորոշիչներ	**Տարեկան պլան**	**Տարեկան ճշտված պլան**	**Փաստ**	**Ճշտված պլանի և փաստի տարբե-ությունը**	**Տարբերության պատճառը**
Ռենտգենյան սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների քանակ, հատ	24.00	24.00	24.00	-	
Ռենտգենյան սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայություններ մատուցող ընկերությունների թվաքանակ, հատ	2.00	2.00	2.00	-	
Համակարգչային սարքավորումների քանակ, հատ	1,811.00	1,641.00	1,391.00	250.00	Շեղումը պայմանավորված է նրանով, որ նախատեսված թվով 250 հատ համակարգիչները տեխնիկական պատճառներով մատակարարվել են 2021 թվականի հունվար ամսին:
Գրասենյակային գույքի միավոր քանակ, հատ	1,317.00	1,317.00	1,317.00	-	
Այլ սարքավորումների քանակ, հատ	620.00	414.00	414.00	-	

Սարքավորումների ծառայության կանխատեսվող միջին ժամկետ, տարի	4.00	4.00	4.00	-	
Ձեռքբերվող վարժեցվող շների քանակ, հատ	4.00	4.00	-	4.00	Շեղումը պայմանավորված է նրանով, որ Covid-19-ի հետևանքով վարժեցվող շների ձեռքբերումը չի իրականացվել:
Վարժեցվող շներ մատակարարող ընկերությունների թիվ, հատ	1.00	1.00	-	1.00	Շեղումը պայմանավորված է նրանով, որ Covid-19-ի հետևանքով վարժեցվող շների ձեռքբերումը չի իրականացվել:
Ձեռքբերվող ծրագրերի փաթեթների թիվ, հատ	1.00	1.00	-	1.00	Շեղումը պայմանավորված է նրանով, որ Covid-19-ի հետևանքով ծրագրային փաթեթների ձեռքբերումը չի իրականացվել:
Ծրագրային ապահովում իրականացնող ընկերությունների թիվ, հատ	1.00	1.00	-	1.00	Շեղումը պայմանավորված է նրանով, որ Covid-19-ի հետևանքով ծրագրային փաթեթների ձեռքբերումը չի իրականացվել:
Ծրագրային փաթեթների օգտագործման միջին ժամկետ, տարի	1.00	1.00	-	1.00	Շեղումը պայմանավորված է նրանով, որ Covid-19-ի հետևանքով ծրագրային փաթեթների ձեռքբերումը չի իրականացվել:
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)	**1,764,914.00**	**1,129,914.00**	**904,196.56**	**225,717.44**	Շեղումը պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ, ինչպես նաև նրանով, որ նախատեսված թվով 250 հատ համակարգիչները մատակարարվել են 2021 թվականի հունվար ամսին:

Տարեկան ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը ՊԵԿ կողմից հիմնավորվել է արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ, ինչպես նաև նրանով, որ նախատեսված թվով 250 հատ համակարգիչները մատակարարվել են 2021 թվականի հունվար ամսին:

4. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱ-ՎՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմանների բարելավում միջոցառումներով 2020 թվականի պլանային ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 38,000.00 հազ.դրամ և 94,348.50 հազ.դրամ, իսկ ճշտված պլանային ցուցանիշները՝ 1,478,281.60 հազ. դրամ և 13,995.0 հազ. դրամ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում միջոցառոմով ֆինանսավորումը և դրամարկղի ծախսը կազմել է 1,443,736.96 հազ.դրամ, փաստացի ծախսը՝ 2,033,480.52 հազ.դրամ: Աշխատանքների կատարողականը կազմել է 97.66%: Տարեկան ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 34,544.64 հազ.դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ COVID-19-ի հետևանքով շինարարական աշխատանքները նախատեսված ժամկետից ուշ են սկսվել:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմանների բարելավում միջոցառումով ֆինանսավորումը, դրամարկղի և փաստացի ծախսերը կազմել են 12,025.0 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 85.92%, իսկ ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 1,970.0 հազ.դրամ: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով:

5. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձաքննությունների ծառայությունների միջոցառումով 2020 թվականի տարեկան ճշտված պլանը կազմել է 10,847.30 հազ.դրամ: Դրամարկղի և փաստացի ծախսերը՝ 10,776.38 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 99.35%: Պլանավորված և փաստացի ծախսված գումարների տարբերու¬թյունը կազմել է 70.92 հազ.դրամ, ինչը պայմանավորված է փորձաքննությունների ծառայությունների՝ ավելի նվազ գներով ձեռք բերման հանգամանքով:

6. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստում միջոցառման շրջանակներում տարեկան պլանը կազմել է 150,411.10 հազ.դրամ: Տարեկան ճշտված պլանը նվազել է, կազմելով՝ 135,411.10 հազ.դրամ: Ֆինանսավորումը, դրամարկղի և փաստացի ծախսերը կազմել են 135,411.10 հազ.դրամ: Ծախսերի կատարողականը կազմել է 100 տոկոս:

Տարեկան պլանով նախատեսվել էր թվով 2240 հարկային և մաքսային ծառայողների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ (թվով 41 դասընթաց 165 ուսումնական խմբերով): Տարեկան ճշտված պլանի համաձայն՝ պետք է վերապատրաստվեին 2240 ծառայողներ, կազմակերպելով 37 դասընթացներ՝ 149 ուսումնական խմբերով: 2020 թվականի ընթացքում վերապատրաստվել են 1611 ծառայողներ, սակայն դասընթացների և ուսումնական խմբերի քանակները մնացել են տարեկան ճշտված պլանին համապատասխան: Շեղումը պայմանավորված է COVID-19-ի հետևանքով մասնակիցների թվաքանակի նվազմամբ:

7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Սոցիալական փաթեթների ապահովում ծրագրի շրջանաՕկներում ՊԵԿ աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար 2020թ. պետական բյուջեի տարեկան ճշտված պլանը կազմել է 237,168.0 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 172,042.0 հազ.դրամ իսկ դրամարկղի և փաստացի ծախսերը՝ 170,532.15 հազ.դրամ: Ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմում է 66,635.85 հազ. դրամ գումար կամ ճշտված պլանի 28.1%-ը: Ծախսի կատարողականը կազմել է 71.9%:

Շահառուների նախատեսված քանակը կազմել է 3294 աշխատակից, սակայն սոցիալական փաթեթից օգտվել են 2369 աշխատակից, նախատեսված քանակից 925 աշխատակցով պակաս, որը համաձայն ՊԵԿ կողմից ներկայացված հաշվետվության, պայմանավորված է աշխատողների աշխատանքի ընդունման վեց ամիսը լրացած չլինելու և շահառուների ցանկում չընդգրկվելու, ինպչես նաև մի շարք աշխատողների կողմից դիմումներ չներկայացնելու հանգամանքներով:

8. ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում միջոցառման շրջանակներում 2020 թվականի տարեկան պլանով միջոցներ նախատեսված չեն եղել, իսկ ճշտված պլանով նախատեսվել է 8,832,153.75 հազ.դրամ: Ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 8,832,153.75 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 100%:

9. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ

Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին միջոցառման շրջանակներում 2020 թվականի տարեկան պլանով նախատեսվել է 70,007,556.20 հազ.դրամ, ճշտված պլանով՝ 84,825,856.20 հազ.դրամ: Ֆինանսավորումը կազմել է 84,651,484.22 հազ.դրամ, իսկ դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 84,642,937.15 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 99.78%: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է 182,919.05 հազ.դրամ:

Միջոցառման շրջանակներում տարեկան և տարեկան ճշտված պլանով նախատեսված է եղել 345,467 մասնակից: Փաստացի 2020 թվականի ընթացքում եղել է 379,612 մասնակից: Տարբերությունը կազմել է 34145 մասնակից: Մասնակիցների թվաքանակը ներկայացվել է ըստ ՀՀ ՊԵԿ-ի ՏՏ վարչության ամփոփած փաստացի ներկայացված տեղեկատվության 2020 թվականի դեկտեմբեր ամսվա հաշվետվություններից, որի հիման վրա էլ կատարվել է փոխանցումը:

10. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ 5-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Միջոցառումով նախատեսվել է կորոնավիրուսի տարածման հետևանքով ՀՀ առանձին տնտեսավարողների (մինչև 20000 սուբյեկտ) մոտ առաջացած դժվարությունների հետևանքով աշխատատեղերի պահպանության, որի նպատակով 2020թ. նախատեսվել է 2,200,000.0 հազ.դրամ գումար: Միջոցառման շրջանակներում

աջակցություն ստանալու նպատակով փաստացի դիմել է 13928 տնտեսվարող սուբյեկտ, որոնց գծով ֆինանսավորումը կազմել է 2,199,791.57 հազ.դրամ, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 2,165,533.60 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 98.43%: Տարբերությունը կազմել է 34,466.40 հազ.դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ աջակցություն ստանալու նպատակով դիմող շահառուների քանակը նախատեսվածից քիչ են կազմել:

11. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ 10-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Միջոցառումով նախատեսվել է կորոնավիրուսի տարածման հետևանքով շուրջ 6200 միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող տնտեսավարողներին ցուցաբերել օժանդակություն, որի նպատակով 2020թ. նախատեսվել է 300,000.0 հազ.դրամ գումար:

Ֆինանսավորումը կազմել է 300,000.0 հազ.դրամ, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 294,684.23 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 98.23%:

Միջոցառման շրջանակներում աջակցություն ստանալու նպատակով փաստացի դիմել է 5134 միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ: Տարեկան ճշտված պլանի համեմատ տարբերությունը կազմել է 5,315.77 հազ.դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ աջակցություն ստանալու նպատակով դիմող շահառուների քանակը նախատեսվածից քիչ են կազմել:

12. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ 18-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Միջոցառումով նախատեսվել է կորոնավիրուսի տարածման հետևանքով ՀՀ առանձին տնտեսավարողների (մինչև 20000 սուբյեկտ) մոտ առաջացած դժվարությունների հետևանքով աշխատատեղերի պահպանության նպատակով տնտեսավարողներին ցուցաբերել օժանդակություն, որի համար 2020թ. նախատեսվել է 2,114,000.0 հազ.դրամ գումար, նույնքան էլ կազմել է Ֆինանսավորումը: Դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 2,113,996.66 հազ.դրամ:

Միջոցառման շրջանակներում աջակցություն ստանալու նպատակով փաստացի դիմել է 11700 շահառու: Շեղումը պայմանավորված է նրանով, որ աջակցություն

ստանալու նպատակով փաստացի դիմել են նախատեսվածից 8300-ով ավելի քիչ շահառուներ:

13. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ 21-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Միջոցառումով նախատեսվել է կորոնավիրուսի տարածման հետևանքով ՀՀ առանձին տնտեսավարողների (մինչև 15,630 սուբյեկտ) մոտ առաջացած դժվարությունների հետևանքով աշխատատեղերի պահպանության նպատակով տնտեսավարողներին ցուցաբերել օժանդակություն, որի համար 2020թ. նախատեսվել է 2,630,000.0 հազ.դրամ գումար, նույնքան էլ կազմել է Ֆինանսավորումը: Դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 2,614,916.90 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 99.43%:

Միջոցառման շրջանակներում աջակցություն ստանալու նպատակով փաստացի դիմել է 12,857 շահառու: Պլանային ցուցանիշների նկատմամբ տարբերությունը կազմել է 15,083.10 հազ.դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ աջակցություն ստանալու նպատակով փաստացի դիմել են նախատեսվածից 2773-ով ավելի քիչ շահառուներ:

14. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ 23-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Միջոցառումով նախատեսվել է կորոնավիրուսի տարածման հետևանքով ՀՀ առանձին տնտեսավարողների (մինչև 1,500 սուբյեկտ) մոտ առաջացած դժվարությունների հետևանքով աշխատատեղերի պահպանության նպատակով տնտեսավարողներին ցուցաբերել օժանդակություն, որի համար 2020թ. նախատեսվել է 3,300,000.0 հազ.դրամ գումար: Ֆինանսավորումը կազմել է 2,433,000.0 հազ.դրամ: Դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 2,399,890.26 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 72.72%:

Միջոցառման շրջանակներում աջակցություն ստանալու նպատակով փաստացի դիմել է 1340 շահառու: Պլանային ցուցանիշների նկատմամբ տարբերությունը կազմել է 900,109.74 հազ.դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ աջակցություն

ստանալու նպատակով փաստացի դիմել են նախատեսվածից 160-ով ավելի քիչ շահառուներ:

15. ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումների գծով տարեկան ճշտված պլանը կազմել է 185,261.40 հազ.դրամ: Ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 185,261.32 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 100 տոկոս:

VI. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

VII. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

VIII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության արդյունքում անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից առաջարկություններ չեն ներկայացվել: